

ի մոռացութեան կամ յանտեսութեան, ընծայեալս ի լոյս՝ շքեղն վայելութեամբ, յար-
գեալը եւ գովեալ ի հայակցու ուսումնամիլաց:

Խնդասցէ ընդ սոսին եւ Հայքն Ուշասպէտն տեսեալ զիւր աշխատութիւնն ընդ
նորոգութիւն անկելց հայ գարութեան մշակեալս եւ պատիւալս յետ վախճանին իւրց, բազ-
մապատիի տոհմականօք ընդ Երիշերէ հան ժամանակու ի ձեռն իւրոց սեպհականաց:

Իսկ չիցէ՛ ըմբռն եւ ի դէպ ափն ունել թէ եւ ազդն եւս համօրէն ինդակից ընդ
խնդացողն լինիցի այնու՝ զի խնդան նոքա ընդ իւր իսկ սեպհական բարգաւաճանսն. մա-
նաւանդ այնու՝ զի սովին մշակութեամբ հնոյ դասական հայերէն լեզուի զիւրագյն եւս
յաջողեացի հայ ազգին պայճառացեալ ծաղկեցուցանել զիւր զարդի զընուանի բարգա-
զաշխարհարար — զոր այնպէ ազնուադոյն ջանիւք ճշնի օր ըստ օրէ ամբանալ ի լեզու
մասնենազրական՝ մինչեւ ժամանակցէ կատարել լինել նոր դասական հայերէն լեզու։

Այլ այն իմն մանաւանդ քան զայն ամենայն ի դէպ է, զի եւ յանցեալն եւ որ
յայժմուս եւ որ ի յետոյն գալոց իցեն ընդ այն միայն ուրախ լինիցին, զի սովաւ եւ ամե-
նայնիւ Աստուած միւյն փառաւորեացի, որ եւ յաջողեացն առաջնոց երանելի Հայրապե-
տաց մերոց զիւր եւ զայժառութիւն հայական գարութեանց աստուածանորհ աս-
տուածապարտեւ տեղութեամբն՝ որով եւ ծաղկեաւ Հայստան աշխարհ եթէ ի
հաւասու եթէ ի գնացս վարուց կարգաց եւ եթէ յուսմունս։ Հ. Քօրովը. ՍՊԸՆԸ.



Յ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Խ Ն

Միաբանութեանս հիմնարկութեան Զորրորդ Յորելեանին առթիւ բազմաթիւ յե-
ռագիր եւ հետագիր շնորհաւորութեանց եւ մազթանաց առանձինն պատասխանելն ան-
հնարին հանարելով՝ այսու առ հասարակ կը յայտնենք մեր պրտագին շնորհակալութիւնն։
յՄՄԲ. “ՀԱՅՈՒՀԻՍԻ,,”

Պարոն Առաքել Սարուխաննեան եւ իւր բարեկամը ի Բագու՛ Միկիթարեան Միաբանու-
թեանս 200ամեկին առթիւ հետեւեալ առարկաները նուիրած են Միաբանութեանս
թանգարանին, որոնց համար խորին շնորհակալութիւն կը մաստոցուի։ Նուերներն ասոնք են-

1. Սկիչ եւ մազմանց արծաթի, վրան հետեւեալ արձանագրութեամբ։

81684. ՕՐԴԱԿԱՆ. Տիկիթիլի. ԲԻՇԻՆ. ԹԱՄՈՒՆ. Վ. ՔԻՄԻԾ. 1788

2. Թաս արծաթի հետեւեալ արձանագրութեամբ։

ՔԻ ԾՐ ՏԱՐԱՒԹՅ. ՈՐԴԻ. ԳԼՈՐԴԻ. 1768

3. Իւղանկար երեք հայկական պատկեր փայտի վրայ նկարուած։

4. Արծաթեայ 2 զայդ զրոց կողք (փառակազմ գրքէ մը հանուած) Քրիստոսի խա-
չելութիւնն ու յարութիւնը ներկայացընելով։

5. Երեք արծաթի փոքր իսաչ։

6. 142 հատ հայկական դրամներ, այսինքն 128 հատ Լեւոն Բ. — 6 հատ Հեթում Ա.

— 6 հատ Լեւոն Գ. — եւ 2 հատ Աւշին։

Թանգարանապետ Հ. Ռ. Վ. Պարոն։

